ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

Հունիսի 3—5-ը Երևանում տեղի ունեցավ գիտական նստաշրջան, որը կազմակերպել էին ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության պատմությունը» կոմպլեքսային պրոբլեմի գիտական խորհուրդն ու նրա հայկական մասնաճյուղը։

Նստաշրջանը, որին մասնակցում էին ՍՍՀՄ եղբայրական հանրապետությունների և սոցիալիստական երկրների բազմաթիվ ականավոր գիտնականներ, բացեց ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Ս. Պ. Աղայանը։ Մասնակիցներին ողջունեց ՀԿԿ կենտկոմի քարտուղար Ս. Ս. Թովմասյանը։

«Ազգային հարցի ուսումնասիրման նոր խնդիրները» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ ակադեմիկոս Ի. Ի. Մինցը։ Նա նշեց, որ ՍՍՀՄ-ում ազգային հարցի լուծման հիմքում ընկած է Վ. Ի. Լենինի մշակած ՍՄԿԿ ազգային քաղաքականությունը։ Զեկուցողը վերլուծեց Հոկտեմբերյան հեղափոխության վճռական դերը ազգային հարցի լուծման գործում, նշելով, որ պրոլետարիատի ղեկավարությամբ Ռուսաստանի բազմազգ աշխատավորության համախմբումը ընդդեմ ցարիզմի և բուրժուազիայի հանդիսացավ մեծ Հոկտեմբերի հիմնական պայմաններից մեկը։ Սոցիալիզմը լիովին և վերջնականապես լուծեց ազգային հարցը։ Դա մի նվաճում է, որ, ինչպես նշել է Լ. Ի. Բրեժնևը, իրավամբ կարելի է դասել սոցիալիզմի կառուցման այնպիսի հաղթանակների շարքը, ինչպիսիք են ինդուստրացումը, կոլեկտիվացումը և կուլտուրական հեղափոխությունը։

Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ս. Ռումբաթ-Զադեն (Բաքու) զեկուցեց Հոկտեմբերյան հեղափոխության և լենինյան ազգային քաղաքականության շնորհիվ սովետական արևելքի ժողովուրդների ձեռք բերած աննախադեպ նվաճումների մասին։ Նա ասաց, որ սովետական արևելքի ժողովուրդները 50 տարում ձևավորվեցին որպես լիիրավ սոցիալիստական ազգեր և այժմ մտնում են մարդկային նոր հանրության կազմի մեջ, որի անունն է մեծ, անհաղթ սովետական ժողովուրդ։

Պատմական գիտությունների դոկտոր Գ. Կ. Ժվանիան (Թբիլիսի) իր «Անդրկովկասի բոլշևիկների պայքարը հանուն պրոլետարական ինտերնացիոնալիզմի լենինյան գաղափարների կենսագործման (1903—1917 թթ.)» թեմայով զեկուցման մեջ լուսաբանեց Անդրկովկասում բոլշևիկյան կազմակերպությունների ծավալած գործունեությունը՝ տարբեր ազգերի պրոլետարների դասակարգային շահերի միասնության, երկրամասի ժողովուրդների բարեկամության ամրապնդման ուղղությամբ։

«Վ. Ի. Լենինը արտաքին և ներքին հակահեղափոխության դեմ պայքարելու համար Ռուսաստանի ժողովուրդների ռազմաքաղաքական դաշինքի կազմակերպիչ (1918—1922 թթ.)» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ պատմական գիտությունների դոկտոր Յու. Ի. Կորբլյովը (Մոսկվա)։ Նա ասաց, որ իմպերիալիստները և բուրժուական ազգայնականները սանձազերծելով քաղաքացիական պատերազմ, նպատակ ունեին տարբեր ազգերի աշխատավորներին տարանջատել և մեկուսացնել, անվստահություն ու թշնամանք սերմանել ռուս պրոլետարիատի հանդեպ, ազգային ծայրամասերն անջատել կենտրոնական Ռուսաստանից, որպեսզի նրանց թուլացնեն և շախշախեն առանձին-առանձին։ Սակայն նրանց ծրագրերը ձախողվեցին, և հաղթանակեց մեծ Հոկտեմբերի հռչակած լենինյան ազգային քաղաքականությունը՝ բոլոր ժողովուրդների հավասարության ու համագործակցության քաղաքականությունը։ Դրա հիման վրա քաղաքացիական կռիվների տարիներին գործում էր սովետական հանրապետությունների ռազմաքաղաքական դաշինքը, որի կազմակերպիչը, ոգեշնչողն ու ղեկավարն էր Վ. Ի. Լենինը։

Պատմական գիտությունների թեկնածու Ն. Վ. Ռոմանովսկու (Մոսկվա) զեկուցումը նվիրված էր Ռուսաստանի ազգային շրջաններում Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի՝ բուրժուական պատմագրության քննադատության որոշ հարցերին։ Նա բացահայտեց պատմության կեղծարարների հակագիտական տեսակետների սնանկությունը և ցույց տվեց, որ դրանց հեղինակները միտումնավոր կերպով ծուռ հայելու

մեջ են ներկայացնում այս կամ այն ազգային շրջանի տնտեսական ու սոցիալական զարգացման մակարդակը, բնակչության դասակարգային կազմը, պրոլետարիատի ազգային կազմը, մոռացության են մատնում գյուղացիության պայքարը կալվածատերերի ու գյուղական բուրժուադիայի դեմ, ճնշված ժողովուրդների հակաբուրժուական պայքարը և տարբեր ազգությունների համախմբումն այդ պայքարում։

«Վ. Ի. Լենինի պատմական դերը ՍՍՀՄ կազմավորման գործում» զեկուցմամբ հանդես եկավ Բելոռուսական ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ի. Մ. Իզնատենկոն (Մինսկ)։ Նշելով Վ. Ի. Լենինի սահմանած պրոլետարական կուսակցության ազգային ծրագրի հիմնական սկզբունքները, զեկուցողը ցույց տվեց, որ այդ ծրագրի իրագործումը հնարավորություն ընձեռեց ոչնչացնելու ազգային սահմանափակվածությունը, ստիճանաբար մերձեցնելու բոլոր ազգերի պրոլետարիատին, բազմազգ Ռուսաստանի բոլոր աշխատավորներին համախմբելու միասնական ընտանիքի մեջ՝ հիմնված փոխադարձ վստահության ու բարեկամության վրա։ Վ. Ի. Լենինի անմիջական ղեկավարությամբ կամավորության, անխախտ բարեկամության ու ժողովուրդների իրավահավասարության սկզբունքների հիման վրա ՍՍՀՄ կազմավորումը մարքսիզմ-լենինիզմի ակնառու հաղթանակ է բուրժուական ազգայնականության նկատմամբ։

Պատմական գիտությունների դոկտոր Վ. Պ. Շերստոբիտովը (Մոսկվա) զեկուցեց «Բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքը որպես ՍՍՀՄ-ում ազգային հարցի լուծման գործոն» թեմայով։ Կոմունիստական կուսակցության կողմից ղեկավարվող բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը սովետական հասարակության զարգացման հիմնական շարժիչ ուժն է։ Շեշտելով այդ, զեկուցողն այնուհետև ցույց տվեց, որ այդ դաշինքը հանդիսացավ սոցիալական այն բազան, որի հիման վրա ազգային հարաբերությունների բնագավառում ձեռք բերվեցին պատմական նշանակություն ունեցող հաջողություններ։

«ՍՍՀՄ-ում ազգային-կուլտուրական շինարարության մի քանի պրոբլեմների լուսաբանումը ժամանակակից բուրժուական պատմագրության մեջ» թեմայով զեկուցեց Ի. Կ. Էլդարովան (Մոսկվա)։ Նա բազմաթիվ օրինակներով ցույց տվեց, որ ժամանակակից բուրժուական պատմագրության մեջ ՍՍՀՄ-ում ազգային-կուլտուրական շինարարության հաջողությունները լուսաբանվում են խեղաթյուրված ձևով։ Ի. Կ. Էլդարովան ընդգծեց, որ սովետական պատմաբանների խնդիրն է գիտական էլ ավելի բարձր մակարդակով մերկացնել կոմունիզմի հակառակորդների կեղծարարությունը ՍՍՀՄ-ում ազգային-կուլտուրական շինարարության պրոբլեմների լուսաբանման ասպարեզում։

Պատմական գիտությունների թեկնածու Ա. Պ. Նեճառոկովը (Մոսկվա) հանդես եկավ «Հոկտեմբերը և մշակույթի ինտերնացիոնալացման պրոցեսը» զեկուցմամբ։ Հաստատելով ազգային հարաբերությունների նոր սկզբունքներ, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը մշակույթի ինտերնացիոնալացմանը տվեց օբյեկտիվ համամարդկային բնույթ, հաստատելով ինտերնացիոնալ և ազգային հիմունքների միասնությունը համաշխարհային մշակույթի զարգացման մեջ, ամրապնդելով պրոլետարիատի, նրա ավանգարդի՝ կոմունիստական կուսակցության և հանձին սովետների՝ պետական իշխանության որոշիչ դերն այդ պրոցեսում։

«Միջին Ասիայում սովետական իշխանության հաղթանակի ընդհանուր օրինաչափությունները և առանձնահատկությունները»,— այսպես էր կոչվում պատմական գիտությունների դոկտոր Խ. Շ. Ինոյատովի (Տաշքենդ) զեկուցումը։ Նա պատմեց, թե բոլշևիկները հանուն սովետական իշխանության ինչպես էին պայքարում դժվարությունների դեմ, բացատրական, դաստիարակչական աշխատանք կատարում աշխատավոր բնակչության շրջանում։ Միջին Ասիայում սոցիալիստական հեղափոխության հաղթանակը կանխորոշված էր ռուս բանվոր. դասակարգի և գյուղացիության հաղթանակով, եզրափակեց զեկուցողը։

Պատմական գիտությունների դոկտոր Ե. Գ. Գիմպելսոնը (Մոսկվա) իր զեկուցումը նվիրեց Ռուսաստանի ազգային շրջաններում սովետական իշխանության հաստատման առանձնահատկություններին։ Չնայած Ռուսաստանի ազգային շրջանների տնտեսական ու քաղաքական զարգացման մակարդակների տարբերությանը, —ասաց նա,— ամենուրեք պայմաններ էին հասունանում սովետական իշխանության հաղթանակի համար։ Այդ պայմաններից կարևորագույնը ռուս պրոլետարիատի ու գյուղացիության դաշինքն էր Ռուսաստանի ճնշված ազգությունների հետ, դաշինք, որը հաստատվեց 1917 թ.։

«ՍՍՀՄ կազմավորումը լենինյան ազգային քաղաքականության հաղթանակն է» թեմայով հանդես եկավ պատմական գիտությունների դոկտոր Գ. Ա. Տրուկանը (Մոսկվա), իսկ պատմական գիտությունների դոկտոր Ա. Ցա. Մանուսևիչը (Մոսկվա) զեկուցեց «Միջպետական և ազգամիջյան հարաբերությունների նոր ձևի՝ սոցիալիստական համագործակցության զարգացումը» թեմայով։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Պ. Աղայանի (Երևան) զեկուցման թեման էր «Անդրկովկասի

անկախ սովետական հանրապետությունների կազմավորումը կուսակցության լենինյան ազգային քաղաքականության հաղթանակն էր։ Զեկուցողը նշեց, որ հանգամանքների բերումով Անդրկովկասում սովետական իշխանության համար պայքարը և ազգային հարցի վերաբերյալ բոլշևիկյան ծրագրի իրագործումը ծանր և ձգձգված բնույթ ստացան։ Մ. Պ. Աղայանը ցույց տվեց, որ Անդրկովկասում սովետական իշխանության հաղթանակը, անկախ սովետական հանրապետությունների ստեղծումը, Անդրֆեդերացիայի մեջ նրանց միավորվելը և վերջինիս՝ ՍՍՀՄ-ի կազմի մեջ մտնելը հսկայական հնարավորություններ ստեղծեցին Անդրկովկասի եղբայր ժողովուրդների անտեսական ու կուլտուրական վերածնության և բարգավաճման համար։

Ուկրաինական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ն. Ի. Սուպրունենկոն (Կիև) իր զեկուցումը նվիրելով «Բանվոր դասակարգը ուկրաինական սովետական պետության ստեղծողն է» թեմային, ցույց տվեց, թե Ուկրաինայի պրոլետարիատը և հեղափոխական զինվորները ինչպիսի պայքար էին ծավալել տեղական բուրժուական-ազգայնական մարմինների դեմ և կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ինչպես իրենց ժողովրդին առաջնորդեցին սոցիալիզմի ուղիով։

«Հոկտեմբերյան հեղափոխությունը և հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը»,— այդպիսին էր պատմական գիտությունների դոկտոր Լ. Ա. Խուրշուդյանի (Երևան) զեկուցման թեման։ Լ. Ա. Խուրշուդյանը նշեց, որ փետրվարյան հեղափոխությունից հետո հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումն անցավ երեք հիմնական էտապ՝ ա) Փետրվարյան հեղափոխությունից մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունն ընկած ժամանակաշրջանը, բ) Հոկտեմբերյան հեղափոխությունից մինչև հայկական բուրժուական հանրապետության ստեղծումը (1918 թ. մայիս) և գ) 1918 թ. մայիսից մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը։ Զեկուցողի կարծիքով հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը բաղկացած էր երկու հոսանքներից՝ բուրժուազգայնական և հեղափոխական-դեմոկրատական։ Լ. Ա. Խուրշուդյանը ցույց տվեց, որ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ գործող սոցիալիստական ուժերի հետ միացած հեղափոխական-դեմոկրատական ուժերը լայն պայքար ծավալեցին ազգային և ագրարային հարցերի լուծման, երկիրը իմպերիալիզմի լծից ազատագրելու և հայ ժողովրդին ֆիզիկական ոչնչացումից փրկելու համար։ Այդ պայքարը հաջողությամբ պսակվեց և Հայաստանում հաստատվեց սովետական իշխանություն։

Պատմական գիտությունների դոկտոր Ա. Կ. Պանկսեևի և պատմական գիտությունների թեկնածու է. Դ. Կառուլի (Տալլին) զեկուցումը նվիրված էր «Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը և ազգային հարցը Էստոնիայում» թեմային։ Զեկուցման մեջ լուսաբանվեց Էստոնիայի բոլշևիկների գործունեությունը լենինյան հանճարեղ գաղափարների կենսագործման ուղղությամբ։

1917 թ. ռուսական բանակում ծավալված ազգային-դեմոկրատական շարժման և ազգային զորամիավորումների զինվորներին հեղափոխության կողմը գրավելու համար բոլշևիկներին մղած պայքարը լուսաբանվեց պատմական գիտությունների դոկտոր Ի. Մ. Իոնենկոյի և պատմական գիտությունների թեկնածու Վ. Ի. Միլլերի (Մոսկվա) զեկուցման մեջ։

Պատմական գիտությունների թեկնածու Գ. Դ. Իոնկինան (Մոսկվա) իր զեկուցումը նվիրեց լենինյան ազգային քաղաքականության իրականացման բնագավառում սովետների համառուսաստանյան համագումարների խաղացած դերին։

«Հոկտեմբերը և ազգային շրջաններում գիտության ձևավորումը» թեմայով զեկուցման մեջ պատմական գիտությունների թեկնածու Վ. Դ. Եսակովը (Մոսկվա) խոսեց միութենական հանրապետություններում գիտության ծաղկման և այդ պրոցեսին ռուս խոշոր գիտնականների մասնակցության հարցի շուրջը։

Գիտական նստաշրջանում զեկուցումների շուրջը ծավալվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին պատմական գիտությունների դոկտորներ Ցա. Կրոպիլակը (Չեխոսլովակիա), է. Լաթուրը (ԳԴՀ), պատմական գիտությունների թեկնածուներ Ֆ. Մուշին (Հունգարիա), Ս. Լոպատելյակը (Լեհաստան), ինչպես նաև մի շարք սովետական գիտնականներ։

Գիտական նստաշրջանի արդյունքներն ամփոփեց ակադեմիկոս Ի. Ի. Մինցը։

Ա. Ի. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ